ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ N 45/6

14-ը մայիսի 2020 թվականի

ԵՊՀ ԻՄ հումանիտար գիտությունների ֆակուլտետի օտար լեզուների ամբիոնի կանոնադրությունը հաստատելու, ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2017թ.-ի հունվարի 27-ին կայացած թիվ 21 նիստում հաստատված ԵՊՀ ԻՄ հումանիտար գիտությունների ֆակուլտետի անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի կանոնադրությունը և ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2017թ.-ի հունվարի 27-ին կայացած թիվ 21 նիստում հաստատված ԵՊՀ ԻՄ հումանիտար գիտությունների ֆակուլտետի ֆրանսերեն լեզվի և գրականության ամբիոնի կանոնադրությունը ուժը կորցրած ճանաչելու մասին:

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ հումանիտար գիտությունների ֆակուլտետի օտար լեզուների ամբիոնի կանոնադրությունը համաձայն հավելված 3-ի։
2. Ուժը կորցրած ճանաչել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2017թ.-ի հունվարի 27-ին կայացած թիվ 21 նիստում հաստատված ԵՊՀ ԻՄ հումանիտար գիտությունների ֆակուլտետի անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի կանոնադրությունը։
3. Ուժը կորցրած ճանաչել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի 2017թ.-ի հունվարի 27-ին կայացած թիվ 21 նիստում հաստատված ԵՊՀ ԻՄ հումանիտար գիտությունների ֆակուլտետի ֆրանսերեն լեզվի և գրականության ամբիոնի կանոնադրությունը։
4. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից։

ԵՊՀ ԻՄ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝_____ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ

Հավելված 3

Հաստատված է

ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի

2020թ. մայիսի 14-ի նիստի թիվ 45/6 որոշմամբ

ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նախագահ՝ ——————————Ա. Հ. Մակարյան

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԱՄԲԻՈՆԻ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Սույն կանոնադրությունը «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության հիմնադրույթներին համապատասխան սահմանում է մասնաճյուղի հումանիտար գիտությունների(ՀԳ) ֆակուլտետի օտար լեզուների ամբիոնի կառուցվածքը, գործառույթները, կառավարումը, ամբիոնի ստեղծման պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման, վերակազմավորման և լուծարման սկզբունքները:

1.2 Ամբիոնը մասնաճյուղի ֆակուլտետի կառուցվածքային հիմնական ուսումնագիտական ստորաբաժանումն է, որը միավորում է մասնագիտական ընդհանրություն ունեցող գիտամանկավարժական կազմը, կազմակերպում և իրականացնում է ուսումնական գործընթաց, ուսումնամեթոդական, հետազոտական և կազմակերպչական աշխատանքներ, բարձրորակ մասնագետների և գիտամանկավարժական կադրերի պատրաստում, նրանց որակավորման բարձրացման և վերաորակավորման գործընթացներ:

1.3 Ամբիոնի ստեղծման, վերակազմավորման և լուծարման մասին որոշումները, կառուցվածքը, իրավասությունները և գործունեության սկզբունքները կարգավորվում են ԵՊՀ ԻՄ, ՀԳ ֆակուլտետի կանոնադրություններով և սույն կանոնադրությամբ:

## 2. ԱՄԲԻՈՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

2.1 Ամբիոնը ստեղծվում է տվյալ մասնագիտությամբ ուսանողական կայուն համակազմի, ուսումնական համապատասխան բեռնվածքի և հինգից ոչ պակաս մասնագետ-դասախոսների առկայության դեպքում, որոնցից առնվազն երեքը պետք է ունենան գիտական աստիճան (գիտական կոչում):

2.2 Ամբիոնի կառուցվածքում կարող են լինել՝

- լեզվի սեկցիաներ,
- մասնագիտական լսարաններ,
- լինգաֆոնային լսարաններ,
- համակարգչային սրահներ:

2.3 Ամբիոնի հաստիքացուցակը ներառում է հաստիքացուցակով նախատեսված գիտամանկավարժական և ուսումնաօժանդակ կազմը.

2.4 Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի ընդունումը, պաշտոնների զբաղեցման պայմաններն ու կարգը սահմանվում են ԵՊՀ ԻՄ պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնների տեղակալման կանոնակարգով, իսկ ուսումնաօժանդակ կազմի պաշտոնները ԵՊՀ ԻՄ կանոնադրությամբ:

## 3. ԱՄԲԻՈՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

3.1 Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի ուսումնական բեռնվածքի բաշխումն իրականացվում է ըստ ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդում հաստատված ուսումնական աշխատանքների հաշվարկի նորմերի:

3.2 Ամբիոնը մասնակցում է մասնագիտական կրթական չափորոշիչների և ուսումնական պլանների՝ իր մասնագիտական ուղղվածությանը առնչվող գործառույթների մշակման գործընթացին:

3.3 Ամբիոնը մշակում է իր կողմից իրականացվող մասնագիտացումների ուսումնական պլանները և այդ պլաններում նախատեսվող առարկայական ծրագրերը:

3.4 Ամբիոնը կազմակերպում է մասնագիտական կողմնորոշման աշխատանքներ:

3.5 Ամբիոնը իրականացնում է ուսանողների դաստիարակչական աշխատանքներ

3.6 Ամբիոնը կազմակերպում և իրականացնում է՝

ա) տեսական, փորձարարական և կիրառական հետազոտական աշխատանքներ ամբիոնի գիտական մասնագիտական ասպարեզում,

բ) գիտամանկավարժական կադրերի պատրաստում,

գ) ուսանողների ընդգրկումը գիտահետազոտական աշխատանքներում,

3.7 Ամբիոնը մասնակցում է գիտահետազոտական կազմակերպությունների հետ պայմանագրային կապեր հաստատելու գործընթացին:

3.8 Ամբիոնը ստեղծում է գիտական, ուսումնական և ուսումնամեթոդական գրականություն, երաշխավորում դրանց հրատարակումը:

## 4. ԱՄԲԻՈՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

4.1 Ամբիոնը ղեկավարում է ամբիոնի վարիչը, որի պաշտոնավորման ժամկետը, իրավասություններն ու աշխատանքի սկզբունքները կանոնակարգվում են ԵՊՀ ԻՄ ամբիոնների վարիչների ընտրության կարգով»:

4.3 Ամբիոնի լիազորությունների շրջանակներում նրա ինքնակառավարման մարմինն ամբիոնի նիստն է, որը գումարվում է առնվազն ամիսը 1 անգամ:

4.4 Ամբիոնի նիստում որոշումներ կայացնելիս վճռական ձայնի իրավունք ունեն պրոֆեսորները, դոցենտները, ասիստենտները, դասախոսները, իսկ խորհրդակցական ձայնի իրավունք՝ հրավիրված համատեղող և խորհրդատու

պրոֆեսորները (դոցենտները, ասիստենտները, դասախոսները) և ուսումնաօժանդակ կազմը:

4.5 Ամբիոնի արտահերթ նիստեր կարող են գումարվել ամբիոնի վարիչի, ֆակուլտետի դեկանի կամ ԵՊՀ ԻՄ տնօրենի նախաձեռնությամբ, ինչպես նաև ամբիոնի վճռական ձայնի իրավունք ունեցող կազմի 2/3-ի պահանջով:

4.6 Ամբիոնի նիստի որոշումներն ընդունվում են կազմի ընդհանուր թվի ձայների պարզ մեծամասնությամբ, իսկ նիստն իրավազոր է, եթե մասնակցում է կազմի 2/3-ը:

4.7 **Ամբիոնի նիստը՝**

4.7.1 առաջարկություններ է ներկայացնում ամբիոնի վարիչի և ֆակուլտետի դեկանի թեկնածությունների վերաբերյալ,

4.7.2 եզրակացություններ է տալիս ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի թափուր պաշտոնատեղերի տեղակալման, պաշտոններում առաջ քաշման, հատուկ տարակարգեր զբաղեցնելու և հավակնորդների հետ աշխատանքային պայմանագրերի կնքման վերաբերյալ,

4.7.3 առաջարկություններ է ներկայացնում նոր ուսումնական մասնագիտությունների, մասնագիտացումների և դասընթացների կազմակերպման վերաբերյալ,

4.7.4 քննարկում և հաստատման է ներկայացնում՝

ա) ուսումնական և առարկայական պլաններ, ամբիոնին առնչվող այլ մեթոդական փաստաթղթեր, նյութեր և ձեռնարկներ,

բ) ուսանողների ավարտական աշխատանքների թեմաները, առաջադրում նրանց ղեկավարների թեկնածությունները,

4.7.5 ներկայացուցիչներ է առաջադրում ֆակուլտետի և ԵՊՀ ԻՄ գիտխորհրդում,

4.7.6 քննարկում և ֆակուլտետի դեկանի հաստատմանն է ներկայացնում ամբիոնի աշխատանքների տարեկան պլանի նախագիծը,

4.7.7 իրավասու է ներկաների ձայների 2/3-ով ֆակուլտետի դեկանին առաջարկություններ ներկայացնելու ամբիոնի վարիչի պարտականությունների վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ,

4.7.8 քննարկում և որոշումներ է ընդունում ամբիոնի գործունեությանն առնչվող այլ հարցերի վերաբերյալ:

4.8 Ամբիոնի որոշումների, եզրակացությունների և առաջարկությունների ընդունման կարգը (փակ կամ բաց քվեարկությամբ) որոշվում է ամբիոնի նիստում:

4.9 Ամբիոնի նիստն արձանագրում է ամբիոնի օպերատոր-գործավարը:

4.10 Ամբիոնի նիստի արձանագրությունը կազմվում է 5 (հինգ) աշխատանքային օրվա մեջ, 2 (երկու) օրինակից:

4.11 Ամբիոնի նիստի արձանագրությունը ստորագրում են ամբիոնի վարիչը և ամբիոնի օպերատոր-գործավարը:

**5. Ամբիոնը պետք է ունենա հետևյալ պարտադիր փաստաթղթերը.**

5.1 Ուսումնական, հետազոտական և մեթոդական-կազմակերպչական աշխատանքների տարեկան պլաններ, ժամահաշվարկ և տարեկան ուսումնական բեռնվածք, աշխատանքային պլան, ծանրաբեռնվածության կատարում, նիստերի արձանագրություններ, դասախոսների հաշվետվություններ և ուսումնական գործընթացի ժամանակացույցեր:

5.2 Ամբիոնի մասնագիտական ուղղվածությամբ տարվող դասընթացների և առարկաների գործող ուսումնամեթոդական, գիտամանկավարժական, ուսումնական ծրագրերի և այլ նորմատիվ փաստաթղթերի փաթեթը:

5.3 ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի կամ ֆակուլտետի գիտական խորհուրդի որոշմամբ այլ փաստաթղթեր: